

Ե Ր Ա Ջ Ն Ե Ր Ը

III.— Ի Ն Ջ Է Ե Ր Ա Ջ Ը

Նախընթաց յօդուածներու ամէջ ջանացած էի բացատրել թէ արդի հոգեբանութիւնը որքան մեծ կարեւորութիւն կուտայ մարդու ենթագիտակցական աշխարհին: Մ. ր. հոգիին խորթափանց արմատները մխրճուած են հոն և այդ անյայտ ներաշխարհէն կը քաղեն իրենց ներշնչումը, իրենց զգացական ապրումները:

Անգիտակից մեր խորքը մեր հոգին իսկ է: Անոր թաքուն բնութեան մասին այնքան տգէտ ենք, որքան արտաքին աշխարհի մասին, և մեր գիտակցութիւնը մեր ենթագիտակցական խորքի մասին անկարող է մեզ բոլորովին լուսարանել, ինչպէս մեր զգայարանքները ի վիճակի չեն ամբողջովին թափանցելու արտաքին աշխարհը» (Լիփս.)

Արդ, կարելի չէ՞ միթէ ու է կերպով հետախուզել այդ խաւարակուռն աշխարհը:

Անշուշտ: Եւ համաձայն նոր հոգեբաններուն, երազներու միջոցաւ մանաւանդ կարելի է հետազօտել ենթագիտակցականը:

Երազներու բնոյթը

Երազները կը ծագին ուղեղային որոշ զարգացումի հասած կենդանական տեսակներու քով: Հաստատուած է որ ընտանի կենդանիները, մանաւանդ ձին և շունը, կ'երազեն իրենց քունի պահուն: Որտի շուներուն և մրցումի ձիերուն քով երազները կը յայտնուին անոնց հծծիւններուն, մարմնական կծկումներուն, սրունքի պրկումներուն միջոցաւ: Այս կենդանիներու յուզումնալից կիսաքն է որ կը վերարտադրուի անոնց քունի պահուն:

Նորածին երախաներու քով, մինչև տասը ամսական՝ երազները անգոյ են: Այնուհետեւ քունի մէջ անոնց խուսափուկ ծիծաղները, շրթունքի ծծիլու շարժումները, հծծիւնները կը մատնեն երազներու առաջին խաղերը, որոնք կը զարգանան տղուն հոգեկան կազմաւորութեան հետ զուգընթացաբար:

Հաւանական է որ ուղեղի գորշ կեղեւը, որ ջղային բջիջներու կայանն է, վճռական դեր կը խաղայ երազներու հիւսուածքին մէջ: Արկածի մը հետեւանքով ուղեղային այդ կեղեւը հանուած մարդիկ կը քնանան առանց երազ տեսնելու:

Մարդոց երազներու հիւսքը և ընթացքը համեմատական է անոնց կեանքի ճոխութեան, անոնց իմացական ներզօրութեան, ա-

նոնց բովանդակ ապրումներու այլազանութեան: Պարզ, սահմանափակ մարդոց քունը խոր և երազներն ալ տարտամ են և հարեւանցի:

Մեր իմացական-հոգեկան կեանքի մէջ ոչինչ չի կորսուիր: Մեր անցեալի բոլոր տպաւորութիւնները, զգայութիւնները, փափաքները, մտորումները և մտածումները, գիտակցական ըլլան թէ անգիտակցական, անպայման հետք մը կը թողուն մեր ուղեղին մէջ և կը թափանցեն, կը կուտակուին ու կը կազմեն մեր յիշատակներու անկորնչելի գանձարանը, անգիտակցականի մշուշին տակ: Ժամանակը կրնայ անցնիլ, բայց մինչեւ մահուան բոլոր անգամ այդ գանձարանին մէջ ամենայնտին յուշերը կը մնան ու կը տեւեն:

Մեր անցեալի այդ յուշարանին մէջ կարգ, արամբանական յաջորդականութիւն չպէտք է փնտռել: Հոն գիղուած արամբանութիւնները կը կազմեն տարերային խառնակոյտ մը, ինչպէս են շէնքի մը շինութեան համար անհրաժեշտ նախանիւթերը: Մեր ներաշխարհը այնպէս է, ինչպէս կեանքը, անակնկալ, տարերային և արկածալից:

Արթնութեան ստեղծման մեր գիտակցութիւնը՝ իբրեւ վերջին հակակշիռ, իբրեւ խոհական ճարտարապետ կը յաջողի կարգ կանոն գնել այդ քառոսին մէջ: ան կ'օգտագործէ անցեալի յուշերը և տպաւորութիւնները իմացական յղացումներու համար:

Բայց քունը կը ջնջէ այդ վերին իշխանութիւնը, հակակշիռը կը դադրի գործելէ: մարդը գլխատուած մըն է, ենթագիտակցական աշխարհը կը տիրապետէ մարդուն, անցեալը կը յառնէ իր մէջ, երազներու ծիածանը, կամ փոթորիկը կը տարածուի քնացող մարդուն անտիրական բեմին վրայ:

Երազներու պահուեն կը խաթարուին ժամանակի և միջոցի, պատճառի և արդիւնքի, կարելիի և անհնարի բոլոր սահմանները: Խիղճ, գիտակցութիւն, բարոյական բնազդ ոչ մէկ կշիռ ունին անոնց ընթացքին վրայ: Օճառի պղպջակի նման կը բարձրանան անոնք տարտամ կիտալումնի մը տակ ու կը պայթին:

Երազները սակայն մինակ քունի մէջ չէ որ կը յայտնուին: Որոշ էակներու քով, նոյն իսկ արթնութեան պահուեն, գիտակցութիւնը բացակայութեան բոլորներ ունի. ու այդ ստեղծ ենթագիտակցական աշխարհը կը գրաւէ մարդը. ան ներկային մէջ չէ. անմիջական շրջապատէն կտրուած, ան իր մէջ կը գիտէ շարժապատկերը խորքէն բխող մտորումներու:

Արթնութեան այդ երազները յատուկ են մեծ մտացրիւներու կամ մեծ ներշնչեալներու, որ յաճախ այդ ինքնամոռացութեան կը պարտին հանճարեղ յղացումներ. որովհետեւ քառուէն կը ծնի իրական ստեղծագործութիւնը:

երազներու բովանդակութիւնը

Միշտ հարց եղած է թէ մեր ենթագիտակցական յուշերէն որո՞նք են որ կը յաջողին երազի վերածուիլ, և ի՞նչ յարաբերութիւն կայ մեր երազներուն և մեր կեանքի պայմաններուն միջեւ:

Ճիշտ է որ մեր յուզուած գիշերներուն մէջ առաւելագոյն օրուան զէպքերու, մեր դրազումներու, ընթացիկ մտահոգութիւններու արձագանգը զգալի է: Բայց ամէնէն ուշադրաւ, անբացատրելի և յաճախողէպ երազները անոնք են որ ոչ մէկ անմիջական առնչութիւն ունին ընթացիկ կեանքի, միջավայրի, ներկայի հետ: Այդ ինքնարուխ երազներն են մանաւանդ որ հոգեբանական արժէք կը ներկայացնեն:

Իրբու այդ, նախ քան Յրոյա, զանազան հեղինակներ ուզած են բացատրել երազները:

Արիս Րիշար կը հաւատար երազներու արամբանականութեան. «Երազներու մէջ գաղափարներու խուժումը պատահական չէ, այլ որոշուած է այն արտաքին պարագաներով, որոնք ժամանակին ծնունդ տուած են այդ գաղափարներուն»: Մինակ այդ խուժումը, մտապատկերներու այդ հոտանքը կը կատարուի անբնական թաւալազոր արագութեամբ, և անիրական համեմատութիւններով, ճիշտ ինչպէս յիմարներու քով: «Յիմարութիւնը արդէն ցաւագին երազ մըն է որ կապած է մարդու բանականութիւնը» (Րիշար)

Մանասէին կը կարծէ թէ երազներուն միջոցաւ մարդ կը վերարտադրէ իր անձնական զարգացումին, ինչպէս նաև իր տեսակի բարեշրջումին նախընթաց փուլերը: «Երազներով կը կրկնենք ինքզինքնիս» կ'ըսէ ան:

Շուպէրթ, Ռանք կ'ենթադրեն թէ երազները նախնական լեզու մըն են արտայայտելու մեր զգայնական յուզումները, ինչպէս բանաստեղծութիւնը: Երազը հոգիին ինքնարտայայտութեան մէկ ձևն է:

Մօրի քայլ մը առաջ առնելով՝ կ'աւելցնէ թէ երազը բնազդական մարդուն արտայայտութիւնն է. անոր միջոցաւ երեւան կ'ելլէ մարդը իր ամբողջական մերկութեան, իր թշուառութեան մէջ, իբրև խաղալիք մը իր այն կիրքերուն, որոնց դէմ արթնութեան ատեն իր կամքը, խիղճը, պատուի և պատշաճութեանց զգացումը դժուարութեամբ կը պայքարին: Քունը կը թմրեցնէ քաղաքակիրթ մարդը ու ասպարէզ կը կանչէ նախամարդը. երազներու պատկերները երկրորդական են, էականը յուզումը, կիրքն է, որ անոնց կ'ընկերանայ: Ալէնտի երազները — ինչպէս նաև հիւանդներու կամ մտապարներու զառանցանքը — կը նկատէ հոգիի ապահովութեան դռնակը (soupape de sûreté), որ կոչուած է դուրս տալու զգացական յորդումը, յոյզերու աւելին:

Այս գաղափարներու ճանապարհով կը հասնինք, կը յանդինք արդէն Ֆրոյսի

Ֆրոյսի տեսակէտը

Ինչպէս ջանացինք առաջին յօդուածով բացատրել, ըստ Ֆրոյսի մարդուն ենթագիտակցական ներաշխարհին. մէջ ամենահիմնական տեղը կը գրաւեն իր ներս մղուած տենջանքները, չիրականացած փափաքները, որոնք կը հակասեն ընթացիկ բարոյական ըմբռնումներու: Մեր արթնութեան ատեն այսպէս մշտական պայքար մը կայ մեր գիտակից գատողութեան և մեր անգիտակից մղումներուն միջև: Մանկութեան շրջանին մէջ մանուաւնդ, մարդը մշտապէս ստիպուած է եղած խեղդելու իր բնութեան ձայնը, իր թաքուն, բնազգական կամէութիւնները, որոնք ներմղուած, բանտարկուած են իր ներսիդին: Ամբողջ կեանքի ընթացքին առաւելապէս սեռային բնազդը մարդու մէջ կը կրէ ամէնէն դաժան բռնակալութիւնը, որովհետեւ ընկերային տեսակէտով ամէնէն վտանգաւոր մոլուցքն է ան:

Մեր խորունկ ու մութ ծոցը կը նմանի զսպուած գազաններու գառագեղի մը, որոնք թէեւ անյագ և անկուշտ, գիտակցութեան պիւրկ շղթաներուն տակ կը մնան հանգարտ և անշարժ, ինչպէս առասպելի տիտանները, որոնք ի վաղուց անտի աստուածներու կողմէ զլորուած ժայռերու տակ կը մնան գիտապառտ:

Բայց երբ կը ննջէ պահապանը — գիտակցութիւնը կը քնանայ —, տիտանները կը շարժին և իրենց սարսուռներով կը ցնցեն լեռը: Ներմղուած փափաքները, մանուաւնդ մանկութեան զգացական զուսպ կեանքը արտայայտութեան ճանապարհ մը կը փնտոեն: Չափահաս մարդը երազի միջոցաւ կը վերածուի մանուկի, և իր մէջ կը յայտնուին մտածումի, զգացումի առաջին շրջանները:

Ուրեմն երազը գորացում մը կը բերէ այդ մանկական և երբեմն ալ այժմէական ցանկութիւններուն: Բայց որովհետեւ ընկալեալ բարոյական ըմբռնումները անգիտակցական սահմաններ գծած են մեր ներսիդին, քունի մէջ անզամ այդ ցանկութիւնները ստիպուած են քողարկուիլ, ծպտուիլ և խաբել այդ բարոյական հակալիչը: Երազներու ամբողջ մտացածին տեսլապատկերները պաճուաւնք մըն են յաճախ ծածկելու համար թաքուն, անխոտտովանելի փափաքը: Երբեմն ալ սակայն իրապաշտ երազները կը յայտնեն նոյն այդ տենջանքները, որ մաքսաննդներու յանդնութեամբ սահմանը կ'անցնին և քունի յագուրդներ կը փնտոեն:

Իր յետագայ գրութիւններուն մէջ Ֆրոյստ աւելի ընդլայնելով այս տեսութիւնները, կը դառաւորէ այն աշխատանքները, զորս ուղեղը կը կատարէ քունի պահուն, երազներու ձեւով:

Երազը կը վերջացնէ ինչ որ օրուան մէջ կիսկատար մնացած էր
 ու է պատահական արգելքի պատճառաւ: Ինչ որ վճռուած չէր հո-
 գեկան յոգնածութեան հետեւանքով:

Երազը կը գոհացնէ՝ բոլոր խնդրուած ներմղուած ցանկութիւնները:

Ու երազը ի յայտ կը բերէ՝ ենթագիտակցական ուղեղի ներքին
 աշխատանքը, որ անկախ է բոլորովին մեր կամքէն:

Երազներու օգտակարութիւնը

Երազը այս պայմաններուն մէջ հոգեկան հանդարտութեան պայ-
 ման մըն է: Ան կը հաշուեփակէ մեր ներքին, առկախ մնացած
 կամէութիւնները՝ «Երազը կ'աւլէ հոգին ճիշտ ներածող, ներծծող
 գործիքի մը պէս», ինչպէս ըսած է Բոպէրթի:

Ու երազը, գոհացումի պատրանքը տալով, կը պաշտպանէ՝ քունը:
 Առանց երազներուն՝ քնացող էակ մը յաճախակի զարթօնքներ պիտի
 ունենար ներքին գրգիռներու և յոյզերու բերումով:

Երազը վերջապէս մեր մարդկային առօրեայ, սեղմ և զուսպ,
 միօրինակ կեանքի փոխարէն աւելի բուռն, ինքնարուխ և խան-
 դոտ կեանքի մը ինքնախարէութիւնն է: Երազը այսպէս սփոփանք
 մը, փոխվրէժ մըն է աշխարհի հանդէպ:

Յաջորդով՝ երազներու մեկնութիւնը:

Փ. ՍԱՆՍՈՒՐ

Գ Ի Չ Մ Ը Ժ Գ Ի Ց



Պարահանդէսին մէջ, հրաւիրեալ մը հան-
 դիպելով բծիշկին:

— Պ. Բծիշկ, երկար առեւէ ի վեր ստա-
 մոքսս կը ցաւի, կը համիք դեղ մը յանձնարարել:

— Սիբով. ըսյց նախ համուեցէք որ քննեմ...:

Կռիփէ տառապող հիւանդը տե-
 առմեմես եկած իր բարեկամին ցոյց
 տալով դեղերու բազմամիւ շիշերը:
 — Ի՞նչ կրնամ հրամայել քեզի, բա-
 րեկամս: